



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՂԵՂԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՐԸՆԿԱԿՈՒԹԵԱՐ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ՝

## **ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԽԱՓԱՆԵԼՈՒ ԱՐԱՐՔՆԵՐԸ ՄԵՂԱՆՉՈՒՄ ԵՆ, ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԵՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻՆ**

*ՀԱՍՏԱՏԵՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ*

Քրիստոնեայ եկեղեցին հաստատուած է խաղաղուեան վրայ, խաղաղութիւնը հիմնական տարրն է եկեղեցւոյ առաքելութեան, որովհետեւ Յիսուս ըսաւ, որ ինք է խաղաղութիւնը, կեանքի ու խաղաղութեան պարգեւիչը: Խաղաղութիւնը մարդուն տրուած Աստուծոյ պարգեւն է, իսկ խաղաղութեան խափանումը մեղանչում է, յայտարարեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, միջ-եկեղեցական արարողութեան մը ընթացքին, Չորեքշաբթի, 19 Հոկտեմբերին, միաժամանակ շեշտելով, որ քրիստոնեայ եկեղեցիները դարերէ ի վեր մաս կազմած են Միջին Արեւելքին ու անոր մշակոյթին, անոնք պետք է միասնական կերպով ու գործնապէս մասնակից ըլլան շրջանի ժողովրդավարական համակարգին:

Վեհափառ Հայրապետը կը խօսեր Ղըպտի Ուղղափառ համայնքի Ս. Աստուածածին եւ Ս. Աթանաս եկեղեցւոյ մէջ միջ-եկեղեցական արարողութեան մը ընթացքին, որ հրաւիրուած էր հիւրընկալ համայնքին կողմէ, ի պատիւ Վեհափառ Հայրապետին: Քրիստոնեայ տարբեր եկեղեցիներ մէկտեղող հոգեւորականներու համախմբումը եղաւ գործնական մէկ արտայայտութիւնը՝ միջ-եկեղեցական յարաբերութեանց մէջ Վեհափառ Հայրապետի տասնամեակներու առաջնորդողի դերակատարութեան, ինչպէս նաեւ քրիստոնեական եկեղեցիներու միջեւ երկխօսութիւնն ու գործակցութիւնը քաջալերողի կեցուածքին:

Վեհափառ Հայրապետը Նորթիճի շրջանին մէջ գտնուող եկեղեցին հասաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ընկերակցութեամբ եւ դիմաւորուեցաւ հոգեւորականաց դասերու կողմէ: Ներկայ էին Արեւտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդներ՝ հիւրընկալ եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Սրաբիոն Եպիսկոպոսը, Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Եւոճին Բափլան Արքեպիսկոպոսը, Անտիոքի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ

Գերշ. Ս. Ժողէֆ Չահլաւոյի Եպիսկոպոսը, Կաթողիկէ եկեղեցւոյ ներկայացուցիչ Յոգշ. Ս. Ալեքսի Սմիթ Վարդապետը, Յայ Աւետ. Միութեան Յովի Վեր. Յովսէփ Մաթոսեանի, Յայ Կաթողիկէ համայնքի Ժողովրդապետ Յոգշ. Ս. Գրիգոր Վրդ. Շահինեան, եւ յիշեալ եկեղեցիներու հոգեւորականաց դասերու անդամներ: Վեհափառ Յայրապետին ու Առաջնորդ Սրբազանին կողքին էին Գերշ. Ս. Եփրեմ Արք. Թապագեան եւ Թեմիս հոգեւորականաց դասու անդամ միաբաններ եւ քահանաներ:

## ՄԻԱՑԵԱԼ ԱՂՕԹՔ

Վեհափառ Յայրապետն ու հոգեւորականներ եկեղեցի մուտք գործեցին «Յրաշափառ»ով: Աղօթքի պահուն, իւրաքանչիւր եկեղեցւոյ ներկայացուցիչ-Առաջնորդ իր լեզուով կատարեց աղօթք մը, ապա տեղի ունեցաւ աստուածաշնչական ընթերցում:

Ողջոյնի ու սրտի խօսքեր արտասանեցին Սրաբիոն Եպիսկոպոս, Զափլան Արքեպիսկոպոս եւ Չահլաւոյի Եպիսկոպոս: Անոնք անդրադարձան Միջին Արեւելքի կացութեան, նորագոյն զարգացումներուն ու յատկապէս Եգիպտոսի մէջ արձանագրուած մտահոգիչ իրադարձութեանց, մաղթելով, որ խաղաղութիւնը դարձեալ տիրապետէ շրջանին: Սրաբիոն Եպիսկոպոս Վեհափառ Յայրապետին փոխանցեց Ղրպտի եկեղեցւոյ հովուապետ Շնուտա Գ. Պապին ողջոյնները եւ բարեմաղթութիւնները:

Առաջնորդ Սրբազանը, հակիրճ կերպով անդրադառնալով այս այցելութեան ու միացեալ արարողութեան պատմական իմաստին՝ հրաւիրեց Վեհափառ Յայրապետը, որպէսզի ուղղէ իր պատգամը:

## «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԲԱԺՆԵԼ ՇՐՋԱՊԱՏԻՆ»

Վեհափառ Յայրապետը առաջին հերթին ողջունեց ներկաները եւ գնահատանքով արտայայտուեցաւ Սրաբիոն Եպիսկոպոսին մասին, որուն ծանօթ է տարիներէ ի վեր: Նորին Ս. Օծութիւնը դրուատեց զըպտի Առաջնորդին բազմամեայ ծառայութիւնները՝ միջ-եկեղեցական աշխատանքներու ծիրին մէջ, սկսելով Միջին Արեւելքէն մինչեւ Միացեալ Նահանգներու այս ափը: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց, որ Ղրպտի Առաջնորդանը հիւրընկալած է միջ-եկեղեցական այս հանդիպումը:

Շեշտելէ ետք քրիստոնեայ եկեղեցւոյ, հաւատացեալներուն ու ամբողջ մարդկութեան համար խաղաղութեան կենսական նշանակութիւնը, Վեհափառ Յայրապետը ընդգծեց, որ քրիստոնեայ եկեղեցին հաստատուած է խաղաղութեան վրայ, խաղաղութիւնը կը կազմէ եկեղեցւոյ սիրտը եւ առաքելութեան հիմնական գիծը: »Մարդս պետք է հնազանդութեամբ ընդունի Աստուծոյ այս պարգեւը, պետք չէ բաւականանայ զայն միայն կրաւորական կերպով ընդունելով, այլ անոր բաժնեկից պետք է դարձնէ իր շրջապատը«, պատգամեց Նորին Ս. Օծութիւնը. ան ընդգծեց, որ քրիստոնեաները խաղաղութեան առաքեալներ են ու պետք է մնան, անոնք հաւատքով, հարուստ փորձառութեամբ եւ յոյսով պիտի պահպանեն Միջին Արեւելքի մէջ իրենց ինքնութիւնը, որովհետեւ արմատաւորուած են աշխարհի այդ շրջանին մէջ, մաս կը կազմեն անոր դարաւոր մշակոյթին, ու

այս յատկանիշները պիտի պահպանեն խաղաղութեամբ, դեմ ըլլալով վայրագութեան: Խաղաղութեան հետեւորդ ըլլալ՝ չի նշանակեր լճացում ու մեկուսացում, այլ անոնք պիտի պահպանեն իրենց իրաւունքները, տէր պիտի ըլլան իրենց պարտականութեանց ու պիտի մասնակցին ժողովրդավարութեան զարգացումին: Հայոց Հայրապետը կոչ ուղղեց զարգացնելու եւ ամրապնդելու միջ-եկեղեցական գործակցութիւնը, առաջնորդուիլ խաղաղութեամբ:

Արարողութեան աւարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում: Այնուհետեւ, ներկաները ճաշով հիւրասիրուեցան Ղըպտի եկեղեցոյ կողմէ:

## **ECUMENICAL PRAYER SERVICE LED BY HIS HOLINESS CATHOLICOS ARAM I**

On Wednesday, October 19, 2011, His Holiness Catholicos Aram I led an ecumenical prayer service, with the participation of spiritual leaders and clergy from the Armenian Apostolic, Catholic, and Evangelical Churches, Coptic, Syriac, and Antiochian Orthodox Churches, and the Roman Catholic Church.

The prayer service was hosted by the Coptic Orthodox Diocese and took place at St. Mary and St. Athanasius Church in Northridge.

Participating in the prayer service were H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.G. Bishop Serapion (Coptic Church), H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan (Syriac Church), Bishop Joseph Zehlaoui (Antiochian Church), Rt. Rev. Alexei Smith (Roman Catholic Church), Very Rev. Fr. Krikor Chahinian (Armenian Catholic Church), and Rev. Joe Matossian (Armenian Evangelical Union), and clergy members from each of the Churches. The Prelate was accompanied by H.E. Archbishop Yeprem Tabakian and clergy members.

With the singing of the "Hrashapar" hymn, His Holiness entered the Church accompanied by the clergy. Prayers were then offered by the leaders or clergy of each Church in their respective languages, followed by readings from the Bible.

Remarks were delivered by Bishop Serapion, Archbishop Kaplan, and Bishop Zehlaoui, all of whom reflected on the current situation in the Middle East and specifically on the recent clashes in Egypt, and expressed their hope for peace to prevail in the region. Bishop Serapion conveyed the greetings and well wishes of H.H. Pope Shenouda III to His Holiness.

The Prelate spoke of the purpose and significance of the ecumenical gathering, and invited His Holiness to deliver his message.

After greeting the clergy, His Holiness commended Bishop Serapion, who he has known for many years, speaking highly of his service in ecumenical affairs from the Middle East to the United States, and expressed his thanks to the Bishop for hosting the gathering.

His Holiness noted that Christian Churches were established on the basis of peace, that peace forms the heart of our Churches and the foundation

of our mission. Christians are disciples of peace and must remain so, and with their faith, knowledge, and hope, must preserve their identity in the Middle East as they have deep roots in the region and form a part of the region's rich and ancient culture. Being a disciple of peace does not mean being stagnant, it means protecting one's rights, assuming responsibility of obligations, and contributing to the development of democracy. His Holiness concluded by calling for strengthening of ecumenical collaboration.

An exchange of mementos followed, after which His Holiness and clergy were hosted to lunch by the Coptic Church.